

# ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ


Առաջադրանքների լուծման համար տրվում է **75** րոպե

**7-8**-րդ դասարաններ

- Յուրաքանչյուր առաջադրանքի համար տրված պատասխաններից ճիշտ է միայն մեկը:
- Չլուծված առաջադրանքի համար միավորներ չեն գումարվում և չեն հանվում:
- Մրցույթի մասնակիցը կարող է վաստակել առավելագույնը 120 միավոր:
- Մրցույթի ավարտին առաջադրանքների թերթիկը մնում է մասնակցի մոտ:
- Մրցույթի մասնակիցներին և կազմակերպիչներին ներկայացվող գլխավոր պահանջը առաջադրանքները ինքնուրույն և ազնիվ կատարելն է:

## 3 միավոր գնահատվող առաջադրանքներ

1. Ո՞ր բառն է գրված նկարելուկով:



Ա. անխոտոր    Բ. բանալի    Գ. անդորր    Դ. ամսաթիվ    Ե. բալենի

2. Ո՞րն է շարքում հաջորդ բառը:

բերք, քամի, իլիկ, կույտ, \_\_\_\_\_

Ա. ցանց    Բ. հողմ    Գ. տետր    Դ. տանիք    Ե. այգի

3. Արջ, առյուծ, կորյուն, խոզ, կով, խոճկոր, քոթոթ, հորթ, ոչխար կենդանիներից ո՞րն է մենակ մնացել:

Ա. ոչխարը    Բ. հորթը    Գ. արջը    Դ. կորյունը    Ե. խոճկորը

4. Ի՞նչ է գրված Օ նկարելուկով:

Ա. ծով    Բ. ծեր    Գ. օղակ    Դ. օծում    Ե. ծիրան

5. Ամբողջացրու դարձվածքը. «Լավությունն արա, ջուրը գցիր. \_\_\_\_\_ չիմանա, Աստված կիմանա»:

Ա. մարդը    Բ. ջուրը    Գ. ձուկը    Դ. հրեշտակը    Ե. հարևանը

6. Ի՞նչ պետք է գրել մեղվիկի փոխարեն:

կաթսա – աման

իշխան – ձուկ

շերեփուկ –

Ա. ձկնիկ    Բ. փոքրիկ շերեփ    Գ. ձկնկիթ    Դ. կրիայի ձագ    Ե. գորտի ձագ

7. Թռչունների խմբին անիվ ավելացնելով՝ կենդանիների ո՞ր խմբի անվանումը կստանանք:

Ա. երամ    Բ. երամակ    Գ. ոհմակ    Դ. նախիր    Ե. հոտ

8. Պատասխանի տարբերակներից ո՞րն ընտրես, որ դառնա ներքոբերյալ առաջին բառի վերջը և երկրորդ բառի սկիզբը:

ԿԵՐ ( . . . ) ՏԱՌ

Ա. սար    Բ. պաս    Գ. կեր    Դ. պար    Ե. կոն

9. Ի՞նչ քաղաք է.

Դուրսը՝ արծաթ, ներսը՝ ոսկի է:

Որ քաղաքն է, կքանդվի ու էլ չի շինվի:

(ժողովրդական հանելուկ)

Ա. ոսկի քաղաք    Բ. ձվածեղ    Գ. ձու    Դ. արև և լուսին    Ե. ծիրան

10. Նշված բառերից որո՞վ կարելի է ստանալ նոր բառ՝ վանկերի տեղերը փոխելով:

Ա. մատաղ    Բ. քարկապ    Գ. վարպետ    Դ. սեղան    Ե. կահույք

## 4 միավոր գնահատվող առաջադրանքներ

11. Լավագույն, վարդագույն, շառագույն, շագանակագույն, մոխրագույն բառերի շարքում ո՞րն է «ավելորդ»:

Ա. լավագույնը    Բ. վարդագույնը    Գ. շառագույնը

Դ. շագանակագույնը    Ե. մոխրագույնը

12. Երախտամոռ, ծիրանավառ, խաղողօրհներ, սոխակ, մոշահավ, հոնորար, դեղձանիկ, տանձուտ, հյուղակ, թութակ: Քանի՞ միրգ և հատապտուղ հավաքեց Սոնան տրված բառերից՝ պահպանելով բառերում տառերի հաջորդականությունը:

Ա. 6    Բ. 7    Գ. 8    Դ. 9    Ե. 10

13. Ի՞նչ տառակապակցություն պետք է գրել մեղվիկի փոխարեն:

Ա.Թ, Բ.Ը, Գ.Է, Դ.Զ,

Ա. ԱԵ    Բ. ԶԷ    Գ. ԵԶ    Դ. ԵԵ    Ե. ԵԴ

14. Ոտքերը՝ կրակում, ինքը՝ երկնքում: (ժողովրդական հանելուկ)

Ա. կայծակ    Բ. ծուխ    Գ. թոնիր    Դ. լապտեր    Ե. թել

15. Ի՞նչ նախադասություն է գաղտնագրված:

**Էչսեէչրեջեայբնուիինիկենէչմեն**

Ա. Դու մեր բակի բնակիչ չես:    Բ. Եթե բնակիչ ես, պատրաստվի՛ր:

Գ. Ես երջանիկ եմ:

Դ. Ես չեմ կարող բակ իջնել:

Ե. Չես ուզում, մի՛ արա:

16. Մի բառ կա, որը կհովացնի, եթե «զ» ավելացնենք, կփչի, եթե «հ» ավելացնենք, կալեկոծվի, եթե «ծ» ավելացնենք: Ի՞նչ կանի, եթե «կ» ավելացնենք:

Ա. կնվազի    Բ. կխոսի    Գ. կկարդա    Դ. կգրի    Ե. կկերակրի

17. Առաջին տողն ունի հետաքրքիր օրինաչափություն: Այն գտնելով՝ կլրացնես երկրորդ տողը:

ՄԵՂԱՆ (ՆԱՎԱԶ) ԶԱՎԱԿ  
ՇԵՐԱՄ ( . . . . . ) ԿԱՀՈՒՅՔ

Ա. մանուկ    Բ. ամրակ    Գ. մերակ    Դ. մահակ    Ե. հակում

18. Ո՞ր բառը կամ բառերն են կազմվել **նկարատակ** բառից՝ օգտագործելով դրա բոլոր տառերը:

1. տնկարան    2. կատակարան    3. կարկատան    4. կտակարան    5. անկատար

Ա. 1-ինը և 2-րդը    Բ. 3-րդը    Գ. 4-րդը  
Դ. 3-րդը և 4-րդը    Ե. 1-ինը, 4-րդը և 5-րդը

19. **Մեկ, երկու, ինը, տաս, քսան, ութ, տասներեք, քսանվեց** բառերն ինչ-որ օրինաչափությամբ կապված են իրար, բացի մեկից: Ո՞ր բառը չի համապատասխանում այդ օրինաչափությանը:

Ա. մեկ    Բ. ինը    Գ. տաս    Դ. տասներեք    Ե. քսան

20. Թվարկված բառերից որո՞նք են առաջացել մարդու մարմնի մասերի անվանումներից:

1. մանրոտիկ    2. ոտնակ    3. ծղոտ    4. գլխավոր    5. անձեռակերտ

Ա. 1, 2, 5    Բ. 1, 2, 4, 5    Գ. 1, 2    Դ. 2, 3, 4, 5    Ե. բոլորը

**5 միավոր գնահատվող առաջադրանքներ**

21. Ո՞ր բառն է գաղտնագրված **հոտավետ, ախորժելի, մեղմաբույր, երանելի, դափամա** բառերով:

Ա. համեղ    Բ. թարմ    Գ. տաք-տաք    Դ. հյութալի    Ե. քաղցրահամ

22. Ի՞նչ է գրված ԱՏ նկարելուկով:

Ա. մատանի    Բ. շատ    Գ. հաստատ    Դ. ատամ    Ե. տհաս

23. **Շ, Ն, ՈՒ** տառերով հնարավոր է կազմել երկու բառ՝ **ՇՈՒՆ, ՆՈՒՇ**: Քանի՞ բառ է հնարավոր կազմել Ղ, Տ, Ա տառերով՝ օգտագործելով յուրաքանչյուր տառը մեկ անգամ:


Ա. 1    Բ. 2    Գ. 3    Դ. 4    Ե. 5

24. Պառավ նստել առվի ափին,  
Քառսուն լաչիկ փաթթել գլխին,  
Բուրդ կզգե,  
Թթու կուզե: (Ժողովրդական հանելուկ)

Ի՞նչ կամ ո՞վ է նստել առվի ափին:

Ա. գազար    Բ. սիսեռ    Գ. տատ    Դ. բագուկ    Ե. կաղամբ

25. Ի՞նչ տառակապակցություն պետք է գրել մեղվիկի փոխարեն:

ԱԱԱ, ԲԱԳ, ԱԴԱ, ԵԱԶ, ԱԷԱ, ԸԱԹ,   
Ա. ԱԺԱ    Բ. ԶԱԵ    Գ. ԱԲԱ    Դ. ԺԱԼ    Ե. ԱԳԱ

26. **Նավակ, մուշտակ, արջալույս, նախորդ, հեղինակագրկել, Քուրք, վարկաբեկել, մակույկ, նախկին, վերջալույս:**

1-ին և 2-րդ շարքերի բառերը կապված են միմյանց հետ ինչ-որ օրինաչափությամբ: Ո՞ր բառը չի համապատասխանում այդ օրինաչափությանը:

Ա. քուրք    Բ. վարկաբեկել    Գ. մակույկ    Դ. նախկին    Ե. վերջալույս

27. Ո՞րն է նկարելուկով պատկերված հանելուկի ճիշտ պատասխանը:



Ա. անդունդ    Բ. մատանի    Գ. մատնոց    Դ. կարաս    Ե. խարտոց

28. Աջ կողմում բերված է տառաթվային ծածկագիր, որում յուրաքանչյուր տառին համապատասխանում է մեկ թվանշան: Նույն տառերին համապատասխանում են նույն թվանշանները: Բերված տարբերակներից ո՞րն է համապատասխանում այդ տառաթվային ծածկագրին:

Ա. 46406	Բ. 45406	Գ. 56407	Դ. 64041	Ե. 56507
+	+	+	+	+
<u>46406</u>	<u>45406</u>	<u>56407</u>	<u>64041</u>	<u>56507</u>
92812	90812	112814	128082	113014

29. Ստորև բերված յոթ բառերից վեցն ինչ-որ օրինաչափությամբ կապված են իրար: Ո՞ր բառը չի համապատասխանում այդ օրինաչափությանը:

ասեղ, բուրգ, գիրք, դեմք, երակ, զանգ, ընծա

Ա. ընծա    Բ. բուրգ    Գ. զանգ    Դ. դեմք    Ե. ասեղ

30. **Թռչկոտել, փայլփլել, ցատկոտել, թանաքոտել, ժանգոտել, կեղտոտել, նստոտել, կարոտել, ծամծմել, փռչոտել** բառերից քանի՞սն են արտահայտում գործողության բազմապատկում:

Ա. չորսը    Բ. հինգը    Գ. վեցը    Դ. յոթը    Ե. տասը